

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2011 թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

Երևան 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ.....	8
ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ.....	10
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ	11
ԵՎՐՈՊԱ.....	12
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ	12
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ	14
ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ	16
ՎՐԱՍՏԱՆ	16
ԻՐԱՆ.....	17
ԹՈՒՐԲԻԱ	18
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԵՎՐԱԶԵՍ.....	19
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	20
ԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ	21
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ	22
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ.....	23
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	25
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.....	25
ՀՀ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿ-Ի ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ.....	25
ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	26
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ	27

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.....	28
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	28
ՀԱՊԿ	28
ՆԱՏՕ.....	29
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ	29
ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	30
ԳԼՈՔԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ	30
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	30
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ	31
ՍՓՅՈՒՌՔ.....	32
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	32
ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ.....	33
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.....	33
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ	34

ՆԱԽԱԲԱՆ

Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծած արտաքին քաղաքականության ուղենիշների եւ տրված հանձնարարականների հիման վրա 2011 թվականին արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ուղղված են եղել Հայաստանի արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, պետության զարգացման արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, արտերկրում Հայաստանի եւ նրա քաղաքացիների շահերի պաշտպանությանը, երկրի հեղինակության ամրապնդմանը, միջազգային տնտեսական համագործակցության եւ առեւտրատնտեսական կապերի զարգացմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումների ներկայացմանը, միջազգային կազմակերպություններում եւ գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ եւ գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը:

2011 թվականը, նշանավորելով անկախության 20-ամյակը, եղավ յուրատեսակ ստուգատես արտաքին քաղաքականության ոլորտում գրանցված ձեռքբերումների ամփոփման տեսանկյունից: Արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպել՝ նվիրված հորեյանին:

Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում 2011 թվականը վերահաստատեց վերջին տարիներին արձանագրված Հայաստանի ու միջազգային հանրության դիրքորոշումների ներդաշնակությունը, իսկ տեղի ունեցած զարգացումները հիմնավորեցին ընտրած մարտավարության ճշմարտացիությունն ու արդյունավետությունը: Դրա ապացույցն էին մարտի 5-ին Սոչիում Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հանդիպման արդյունքում ընդունված հայտարարությունը, մայիսի 26-ին Դովիլում Մեծ Ութնյակի գագաթաժողովի շրջանակներում Ռուսաստանի, Միացյալ Նահանգների եւ Ֆրանսիայի նախագահների համատեղ հայտարարությունը, հունիսի 24-ին Կազանում կայացած Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը, ինչպես նաեւ դեկտեմբերի 6-ին Վիլնյուսում ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների եւ Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների համատեղ հայտարարությունը:

Հաշվետու տարին նշանավորվեց հայ-ռուսական ռազմավարական եւ դաշնակցային փոխգործակցության առավել ամրապնդմամբ, ինչն արտացոլվեց երկկողմ հարաբերությունների քսանամյա պատմության ընթացքում ՀՀ Նախագահի առաջին պետական այցելությամբ Ռուսաստանյան Դաշնություն, որը թե իր մակարդակով, թե բովանդակությամբ վերահաստատեց դաշնակցային հարաբերությունների ամրությունը եւ խորությունը:

Որակական նոր մակարդակի է բարձրացվել Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերությունը, շարունակվել են բազմաբովանդակ համագործակցության զարգացումն եւ բարձր մակարդակի փոխայցելությունները:

Առավել խորացվել եւ ամրապնդվել են Ֆրանսիայի հետ ավանդական սերտ բարեկամական հարաբերությունները: 2011 թվականին Ֆրանսիայի նախագահի պետական այցը Հայաստան պատմական էր թե իր նշանակությամբ, թե արդյունքներով:

Զարգացում են ապրել եվրոպական երկրների հետ հարաբերությունները, որոնք արտացոլվել են բարձր մակարդակի փոխայցելություններով, քաղաքական երկխոսության, տնտեսական համագործակցության եւ մշակութային փոխանակումների ակտիվացմամբ:

Լուրջ առաջընթաց է արձանագրվել եվրոպական ընտանիքի հետ մերձեցման գործընթացում: Հաջող ընթացք են ունեցել Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները, Եվրոպական Խորհուրդը հաստատել է մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման շուրջ բանակցությունների մանդատը: Կարելի է առաջընթաց է արձանագրվել խորը եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման շուրջ բանակցությունների նախապատրաստական աշխատանքներում:

Շեղանակական զարգացում են ապրել Հայաստանի դարավոր բարիդրացիական հարաբերությունները անմիջական հարեաններ Վրաստանի եւ Իրանի հետ:

Վերահաստատվել է միջազգային հանրության աջակցությունը հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորման Հայաստանի սկզբունքային դիրքորոշմանը, իսկ Թուրքիայի ապակառուցողական մոտեցումները համապատասխան վերաբերմունքի են արժանացել միջազգային հանրության կողմից:

Շարունակվել է փոխշահավետ համագործակցությունը ԱՊՀ անդամ երկրների հետ, արդյունավետ մասնակցությունը Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերին, փոխգործակցությունը ԵՎՐԱԶԵՍ-ի հետ:

Նոր թափ է ստացել գործընկերությունը Չինաստանի, Հնդկաստանի եւ Ճապոնիայի հետ:

Թեև մի շարք արաբական երկրներում տեղի ունեցած իրադարձություններին՝ քայլեր են ձեռնարկվել արաբական աշխարհի հետ բնականոն հարաբերությունների պահպանման ուղղությամբ:

Խոստումնալից զարգացումներ են գրանցվել ասիական եւ լատինամերիկյան ուղղություններով:

Ընդլայնվել է բարձր մակարդակի փոխայցելությունների աշխարհագրությունը, ինչպես նաև դրանց արդյունավետությունը ձեռք բերված պայմանավորվածություններով եւ ստորագրված շուրջ հարյուր քսան պայմանագրերով ու այլ փաստաթղթերով:

Շարունակվել են պարբերական շփումները ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամ երկրների հետ:

Փոխայցելություններ են տեղի ունեցել Հունաստանի, Շվեյցարիայի, Իտալիայի, Կիպրոսի, Ուկրաինայի, Լեհաստանի, Վրաստանի, Լատվիայի, Սլովենիայի, Սերբիայի, Լիբանանի, Լիտվայի, Իրանի, Բրազիլիայի, Նորվեգիայի, Չինաստանի, Հնդկաստանի, Արգենտինայի, Միացյալ Նահանգների, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Շվեդիայի, Բելառուսի, Չեխիայի, Դանիայի, Իռլանդիայի, Ավստրիայի եւ մի շարք այլ երկրների հետ:

Հանրապետության Նախագահին իրականացրել է 25 օտարերկրյա այց, Հայաստան է այցելել 7 երկրի ղեկավար: Աժ նախագահի մակարդակով տեղի է ունեցել 8 փոխայցելություն, Հանրապետության վարչապետի՝ 12 փոխայցելություն: Արտգործնախարարը կատարել է 39 օտարերկրյա այց, Հայաստան է այցելել 14 արտգործնախարար եւ միջազգային կազմակերպության ղեկավար:

Հայաստանը ոչ միայն ակտիվորեն ներգրավված է եղել իր անվտանգության կարևոր բաղադրիչ հանդիսացող Հավաքական անվտանգության պայմանագրի

կազմակերպության շրջանակներում ընթացող գործընթացներում, այլեւ հանդես է եկել կառույցի ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններով:

Հաջողությամբ ընթացել է համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի եւ այլ ձեւաչափերում:

Հայաստանն ընդլայնել է իր մասնակցությունը միջազգային խաղաղապահ գործողություններին:

Բազմակողմ հարթության շրջանակներում շարունակվել է արդյունավետ մասնակցությունը ՄԱԿ-ի եւ միջազգային այլ կազմակերպությունների գործունեությանը, ակտիվ ներգրավվածությունը մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում, ահաբեկչության եւ այլ մարտահրավերների դեմ միջազգային հանրության պայքարում:

Տնտեսական բաղադրիչը կարեւոր տեղ է զբաղեցրել արտաքին քաղաքական օրակարգում: Զարգացել են տնտեսական հարաբերությունները ինչպես երկկողմ, այնպես էլ միջազգային կառույցների եւ ֆինանսական ինստիտուտների հետ: ԱԳՆ անմիջական մասնակցությամբ եւ համակարգմամբ տեղի են ունեցել տասնյակ միջկառավարական հանձնաժողովների նիստեր եւ գործարար համաժողովներ:

Շարունակվել է միջազգային համագործակցությունը մշակութային, գիտական եւ կրթական ոլորտներում:

ԱԳՆ-ն իր գործուն աջակցությունն է բերել Սփյուռքի նախարարության նախաձեռնությունների եւ ծրագրերի իրականացմանը, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը:

Արտգործնախարարությունը նպաստել է համակարգել է Հայաստանի այլ պետական կառույցների արտաքին կապերի զարգացումը:

Ի կատարումն Ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների կազմակերպման՝ պետական հանձնաժողովի ստեղծման մասին ՀՀ Նախագահի հրամանագրի համապատասխան աշխատանքեր են նախաձեռնվել ԱԳՆ եւ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից:

Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից ցեղասպանությունների ժխտումը քրեորեն պատժելու մասին օրինագծի ընդունումը կարեւոր քայլ հանդիսացավ Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ պայքարում:

Օգոստոսին Հանրապետության Նախագահի մասնակցությամբ տեղի ունեցավ ԱԳՆ կենտրոնական ապարատի եւ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հավաքը:

2011 թ. ԱԳՆ դիվանագիտական դպրոցն ավարտեցին առաջին ունկնդիրները, որոնցից լավագույնները համալրեցին ԱԳՆ շարքերը:

Բարձրացել է Հայաստանի միջազգային հեղինակությունը որպես հուսալի գործընկերոջ, շեշտակի ավելացել են Հայաստանի վերաբերյալ դրական հրապարակումները օտարերկրյա ՋԼՄ-ներում: ՀՀ Նախագահն ու արտգործնախարարը ունեցել են շուրջ 60 ելույթներ եւ հարցազրույցներ աշխարհի հեղինակավոր քաղաքագիտական կենտրոններում եւ միջազգային առաջատար լրատվամիջոցներում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում 2011 թվականը վերահաստատեց վերջին տարիներին արձանագրված Հայաստանի ու միջազգային հանրության դիրքորոշումների ներդաշնակությունը, իսկ տեղի ունեցած զարգացումները հիմնավորեցին ընտրած մարտավարության ճշմարտացիությունն ու արդյունավետությունը:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների եւ Ֆրանսիայի ջանքերն՝ ուղղված արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը:

Վերահաստատվեցին միջազգային հանրության այն մոտեցումները, որոնք արդեն չորս տարի շարունակ արտացոլվում են ԵԱՀԿ շրջանակներում:

Մարտի 5-ին Սոչիում Ռուսաստանի նախագահի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը, որի արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ ձգտել բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ միջոցներով եւ կրակի դադարեցման գծի երկայնքով կողմերի մասնակցությամբ անցկացնել հնարավոր միջադեպերի հետաքննություն: Սակայն ադրբեջանական կողմը տարվա ընթացքում խոչընդոտեց նման մեխանիզմի ստեղծմանը:

2011թ. մայիսի 26-ին Դովիլում կայացած «Մեծ Ութնյակի» գագաթաժողովում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարներ Դմիտրի Մեդվեդևի, Բարաք Օբամայի եւ Նիկոլա Սարկոզիի՝ հակամարտության բոլոր կողմերին ուղղված համատեղ հայտարարության մեջ վերահաստատվեցին հիմնախնդրի կարգավորման հիմքը կազմող միջազգային իրավունքի սկզբունքներն ու հանգուցալուծման տարրերը: Հատուկ ընդգծվեց, որ խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի, իսկ ուժի կիրառումը խստորեն կդատապարտվի միջազգային հանրության կողմից:

2011թ. հունիսի 24-ին Կազանում կայացած Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումն առաջընթաց չարձանագրեց Ադրբեջանի ղեկավարության՝ հերթական անգամ պայմանավորվածություններից հետ կանգնելու եւ բազմաթիվ նոր փոփոխություններ առաջադրելու պատճառով:

Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի միջնորդությամբ տարվա ընթացքում մի քանի փուլ բանակցություններ են տեղի ունեցել Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի եւ Էլմար Մամադյարովի միջեւ:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Բեռնար Ֆասյեն, Ռոբերտ Բրադկեն եւ Իգոր Պոպովը ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրիշկը, շարունակելով միջնորդական ջանքերը հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ, բազմաթիվ այցեր են կատարել տարածաշրջան՝ Երեւան, Ստեփանակերտ եւ Բաքու:

Դեկտեմբերի 6-7-ը Վիլնյուսում կայացած ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի շրջանակներում ընդունվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների եւ Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հնգակողմ հայտարարություն, որով վերահաստատվեց բացառապես խաղաղ միջոցներով ու միջազգային իրավունքի հիման վրա դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման այլընտրանքի բացակայությունը, շփման գծում միջադեպերի քննության մեխանիզմի ստեղծման կարելիությունը եւ դիպուկահարների դուրսբերումը:

ՌՌԻՍԱՍՏԱՆՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

ՌԴ հետ դաշնակցային, ռազմավարական հարաբերությունները 2011թ. նշանավորվեցին երկուստեք ձեռնարկված մի շարք քայլերով, որոնք միտված էին փոխգործակցության առավել ամրապնդմանը, նոր հեռանկարային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Ընթացիկ տարում շարունակվել է բարձր մակարդակով ինտենսիվ քաղաքական երկխոսությունը: Երկկողմ եւ բազմակողմ ձեռաչափերում ՀՀ եւ ՌԴ Նախագահներն ունեցել են շուրջ մեկ տասնյակ հանդիպում: Հանդիպումներ են կայացել Ռուսաստանի Դաշնության վարչապետի հետ:

Հոկտեմբերի 23-25-ը տեղի է ունեցել ՀՀ Նախագահի՝ հայ-ռուսաստանյան հարաբերությունների պատմության մեջ առաջին պետական այցը Ռուսաստան, որի շրջանակներում ՀՀ Նախագահը հանդիպումներ է անցկացրել ՌԴ Նախագահ Դմիտրի Մեդվեդեվի, ՌԴ կառավարության ղեկավար Վլադիմիր Պուտինի, Ռուսաստանյան Դաշնության խորհրդարանի երկու պալատների ղեկավարների, Մոսկվայի քաղաքապետի հետ, ելույթ է ունեցել Մոսկվայի պետական համալսարանում: Այցի շրջանակներում ստորագրվեցին յոթ երկկողմ փաստաթղթեր:

2011թ. հոկտեմբերի 18-ին Սանկտ-Պետերբուրգում կայացել է ՀՀ եւ ՌԴ վարչապետներ Տիգրան Սարգսյանի եւ Վլադիմիր Պուտինի հանդիպումը:

Հուլիսի 7-8-ը Հայաստան այցելեց Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովին, որին ընդունեց Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը: Տարվա ընթացքում Հայաստանի եւ Ռուսաստանի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանն ու Սերգեյ Լավրովը ունեցել են մեկ տասնյակից ավելի հանդիպում:

Հաշվետու տարվա հուլիսի 5-6-ը ՀՀ ԱԳ նախարարի ՌԴ կատարած պաշտոնական այցի շրջանակներում երկու երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարները ստորագրել եւ փոխանակել են 1995 թ. մարտի 16-ի «ՀՀ եւ ՌԴ միջեւ ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 5 Արձանագրության վավերագրերը:

2011թ. ապրիլի 20-ին Յարուսլավում կայացել է Հայ-ռուսական համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի 20-րդ նիստը:

Հուլիսի 8-9-ը Ռոստովում կայացել է Հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստը:

2011թ. ապրիլի 18-19-ը Երեւանում կայացել է «Հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում միջտարածաշրջանային համագործակցության նոր նվաճումներին ընդառաջ» խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային առաջին համաժողովը, որի շրջանակներում ստորագրվել են շուրջ երկու տասնյակ երկկողմ փաստաթղթեր:

Հաշվետու տարում բազմաթիվ փոխայցելություններ են տեղի ունեցել տարբեր գերատեսչությունների ղեկավարների եւ ապակենտրոնացված մակարդակներով:

Պարբերական բնույթ են կրել քաղաքական խորհրդատվություններն երկու երկրների ԱԳՆ-երի միջեւ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում երկուստեք հետաքրքրության տարբեր ոլորտներում շարունակվել է սերտ համագործակցությունը ԱՄՆ հետ: Ակտիվ աշխատանքներ են տարվել երկկողմ քաղաքական եւ առեւտրատնտեսական կապերի ամրապնդման ուղղությամբ:

2011թ. մայիսի 18-ից 20-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի այցն ԱՄՆ: Այցի ընթացքում նախարար Նալբանդյանը հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Բլինթոնի հետ: Հանդիպումներ են տեղի ունեցել Միացյալ Նահանգների Կոնգրեսում:

2011թ. փետրվարի 23-24-ը Հայաստան է այցելել ԱՄՆ Պետքարտուղարի առաջին տեղակալ Ջեյմս Սթայնբերգը:

2011թ. սեպտեմբերի 23-ին Նյու Յորքում ՄԱԿ ԳԱ 66-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Ուիլյամ Բըրնսի հետ, ով հոկտեմբերի 17-ին այցելել է Հայաստան:

Հաշվետու տարվա սեպտեմբերի 26-ին Վաշինգտոնում կայացել է Հայաստան-ԱՄՆ միջկառավարական հանձնաժողովի ամենամյա նիստը:

2011թ. Հայաստանին հատկացված օժանդակության ծավալը կազմել է 44,7 մլն. ԱՄՆ դոլար:

ԵՎՐՈՊԱ

2011թ. ընթացքում լուրջ առաջընթաց է արձանագրվել Հայաստանի՝ Եվրոպական ընտանիքին մերձենալու արտաքին քաղաքական ուղեգծում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Տարին նշանավորվել է Եվրոպական Միության հետ բարձր մակարդակի քաղաքական երկխոսության եւ համագործակցության խորացմամբ, բարձրաստիճան փոխայցելությունների ակտիվացմամբ:

2011թ. սեպտեմբերի 30-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Վարշավայում տեղի ունեցած Արեւելյան գործընկերության գագաթաժողովին, որի շրջանակներում վերջինս հանդիպումներ է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Հերման Վան Ռոմպոյի, ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Աշթոնի հետ:

Մարտին, սեպտեմբերին, նոյեմբերին եւ դեկտեմբերին Բրյուսել է այցելել ՀՀ վարչապետը, մայիսին՝ ՀՀ ԱԺ նախագահը:

2011թ. մարտի 3-ին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցել է Բրատիսլավայում կայացած Վիշեգրադյան քառյակի՝ Արեւելյան գործընկերության անդամ երկրների ընդլայնված հանդիպմանը:

Ապրիլի 29-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն ու Եվրոպական հանձնաժողովի ընդլայնման եւ հարեանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն Երեւանում ստորագրեցին համագործակցության շարունակական ընդլայնման մասին համատեղ հռչակագիրը:

Հաշվետու տարում ԵՄ-ից Հայաստան են այցելել Եվրոպական խորհրդարանի նախագահ Եժի Բուզեկը, արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով ԵՄ բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը,

Եվրոպական հանձնաժողովի ընդլայնման եւ հարեանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն, Եվրոպական արտաքին գործերի ծառայության Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հարցերով կառավարիչ-տնօրեն Միրոսլավ Լայչակը:

Հայաստան-ԵՄ Ասոցացման համաձայնագրի շրջանակներում 2011թ. կայացել է բանակցությունների չորս լիազումար նիստ եւ մոտ երեք տասնյակ տեսակոնֆերանս: Բանակցվել եւ ժամանակավորապես փակվել է տնտեսական եւ ոլորտային համագործակցության 20 գլուխ:

2011թ. գարնանը եւ աշնանը տեղի են ունեցել Արեւելյան գործընկերության շրջանակներում բազմակողմ համագործակցության չորս թեմատիկ պլատֆորմների հերթական նիստերը, ինչպես նաեւ մի շարք աշխատանքային խմբերի հանդիպումներ:

Շարունակվել է նաեւ ոլորտային համագործակցությունը ԵՄ հետ, մասնավորապես՝ արդարադատության, միգրացիայի, առեւտրի, բնապահպանության, տրանսպորտի, էներգետիկայի, կրթության եւ գիտության ոլորտներում:

2011թ. նոյեմբերի 25-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի նախագահությամբ Բրյուսելում կայացել է Հայաստան-ԵՄ համագործակցության խորհրդի նիստը:

Դեկտեմբերի 6-ին Երեւանում կայացել է մարդու իրավունքների շուրջ Հայաստան-ԵՄ երկխոսության 3-րդ հանդիպումը:

Խորը եւ համապարփակ ազատ առեւտրի գոտի հիմնելու շուրջ բանակցությունները մեկնարկելու համար հայկական կողմի ձեռնարկած քայլերի արդյունքում ակնկալվում է բանակցություններ սկսել 2012թ. առաջին կիսամյակում:

Հաշվետու տարվա դեկտեմբերի 19-ին ԵՄ խորհուրդը հաստատել է ԵՄ մուտքի արտոնագրերի տրամադրման պարզեցման ուղղությամբ Հայաստանի հետ բանակցություններ սկսելու մանդատը: Մոտակա շաբաթներին ակնկալվում է բանակցությունների մեկնարկը:

Հոկտեմբերի 27-ին Լյուքսեմբուրգում արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, ԵՄ ներքին գործերի հանձնակատար Սեսիլիա Մալմստրոմը եւ ԵՄ

անդամ երկրների ներքին գործերի նախարարները ստորագրեցին Հայաստան - Եվրոպական Միություն «Շարժունակության շուրջ գործընկերություն» հռչակագիրը:

Հաշվետու տարվա մայիսին պաշտոնապես հիմնադրվել է Եվրանեսթը՝ որպես Արեւելյան գործընկերության մասնակից պետությունների միջխորհրդարանական համագործակցության մարմին: Սեպտեմբերին կայացել է կառույցի առաջին լիազումար նիստը:

Հայաստանում շարունակել է իր գործունեությունը Եվրոպական Միության խորհրդատվական խումբը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Հետետոդական աշխատանք է իրականացվել Եվրոպական երկրների հետ քաղաքական երկխոսության ամրապնդման եւ տարբեր ոլորտներում համագործակցության զարգացման ուղղությամբ:

2011թ. հունվարի 17-ին կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պետական այցը Կիպրոս: Այցի շրջանակներում ստորագրվել է «Համատեղ հռչակագիր Հայաստանի Հանրապետության եւ Կիպրոսի Հանրապետության միջեւ երկկողմ հարաբերությունների մասին»:

Հունվարի 18-ին կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պետական այցը Հունաստանի Հանրապետություն: Այցի շրջանակներում ստորագրվել է 3 փաստաթուղթ:

Մարտի 9-10-ը ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այց է կատարել Լատվիայի Հանրապետություն: Այցի շրջանակներում ստորագրվել է 2 փաստաթուղթ:

Ապրիլի 4-5-ը տեղի է ունեցել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Սերբիայի Հանրապետություն: Այցի շրջանակներում ստորագրվել է 3 փաստաթուղթ:

Ապրիլի 13-14-ը կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Սլովենիայի Հանրապետություն: Այցի շրջանակներում ստորագրվել է 2 փաստաթուղթ:

Մայիսի 2-3-ը ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այց է կատարել Շվեյցարիայի Համադաշնություն:

Սեպտեմբերի 27-29-ը տեղի է ունեցել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Ֆրանսիական Հանրապետություն:

2011թ. հունիսի 2-ին եւ դեկտեմբերի 12-15-ը կայացել են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցերը Իտալիայի Հանրապետություն եւ Վատիկան:

Առավել խորացվել եւ ամրապնդվել են Ֆրանսիայի հետ ավանդական սերտ բարեկամական հարաբերությունները: 2011 թվականին Ֆրանսիայի նախագահի պետական այցը Հայաստան պատմական էր թե իր նշանակությամբ, թե արդյունքներով:

ՀՀ ԱԺ նախագահը պաշտոնական այցեր է կատարել Միացյալ Թագավորություն ու Գերմանիա, այցելել է Շվեյցարիա եւ Բելգիա: Տեղի են ունեցել նաեւ խորհրդարանական պատվիրակությունների փոխայցելություններ:

Կայացել են ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի այցերը Բելգիա, Ավստրիա, Միացյալ Թագավորություն, Ռումինիա:

2011թ. տեղի են ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական եւ աշխատանքային այցերը մի շարք եվրոպական երկրներ, այդ թվում՝ Ավստրիա, Սլովակիա, Ֆրանսիա, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Միացյալ Թագավորություն, Իռլանդիա, Գերմանիա, Դանիա, Նիդերլանդներ, Լիտվա, Չեխիա:

Հաշվետու տարին առանձնահատուկ էր եվրոպական երկրներից բարձր մակարդակով այցելությունների տեսանկյունից: Հայաստան են այցելել եւ երկրի բարձրաստիճան ղեկավարության հետ հանդիպումներ ունեցել եվրոպական պետությունների ղեկավարներ եւ բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ Շվեյցարիայի Նախագահ Միշլին Կալմի-Ռեյը, Լիտվայի Նախագահ Դալիա Գրիբաուսկայտեն, Լեհաստանի Նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկին, Խորվաթիայի խորհրդարանի նախագահ Լուկա Բեբիչը, Ռումինիայի Սենատի նախագահ Միրչե Ջոանան, Հունգարիայի Ազգային ժողովի նախագահ Լասլո Կյովերը, Լիտվայի ԱԳ նախարար Աուդրոնիուս Աժուբալիսը, Շվեդիայի ԱԳ նախարար Կարլ Բիլդտը, Նորվեգիայի ԱԳ նախարար Յոնաս Գահր Սոյորեն, Ռումինիայի ԱԳ նախարար Թեոդոր Բակոնսկին:

Տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի եւ Էստոնիայի, Միացյալ Թագավորության, Լեհաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի ԱԳՆ-ների միջեւ:

Կայացել են հայ-կիպրական, հայ-ռումինական, հայ-լեհական եւ հայ-ավստրիական միջկառավարական համատեղ հանձնաժողովների նիստեր:

2011թ. ընթացքում եվրոպական երկրների հետ ստորագրվել են մոտ երեք տասնյակ երկկողմ համաձայնագրեր, հուշագրեր, արձանագրություններ եւ համատեղ հռչակագրեր:

2011թ. նոյեմբերին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի ներկայությամբ պաշտոնապես բացվեցին Հայաստանի դեսպանությունները Դանիայում, Լիտվայում, Նիդերլանդներում եւ Չեխիայում: Եվրոպական պետություններից Հայաստանում բացվել է Շվեյցարիայի դեսպանությունը՝ երկու երկրների նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Միշլին Կալմի-Ռեյի մասնակցությամբ:

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ

Հայ-վրացական հարաբերությունները շարունակել են վերընթաց զարգացում ապրել: 2011 թ. երկու պետությունների միջեւ զգալիորեն ակտիվացել են տարբեր մակարդակի փոխայցելությունները, քաղաքական երկխոսությունը:

Հունվարի 22-23-ին կայացել է Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի այցը Հայաստան: Երկու պետությունների նախագահները քննարկել են հայ-վրացական սահմանի անցումը դյուրացնելու, էներգետիկ, առևտրատնտեսական եւ հումանիտար ոլորտներում համագործակցությունը խորացնելու, Վրաստանի հայ համայնքին առնչվող հարցեր:

Նոյեմբերի 29-30-ը կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Վրաստան: Այցի շրջանակներում երկու երկրների ղեկավարները մասնակցել են հայ-վրացական գործարար համաժողովի բացմանը: Այցի շրջանակներում ստորագրվել է 4 փաստաթուղթ:

Հունիսի 10-15-ը կայացել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին 2-րդի այցը Վրաստան: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպումներ է ունեցել Համայն Վրաստանի Պատրիարք Իլյա 2-րդի, Վրաստանի Նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի հետ:

Փետրվարի 15-16-ը տեղի է ունեցել Վրաստանի վարչապետ Նիկա Գիլաուրիի այցը Հայաստան: Նոյեմբերի 18-19-ին Բաթումում կայացել է Հայ-վրացական միջկառավարական տնտեսական հանձնաժողովի 9-րդ նիստը՝ հանձնաժողովի համանախագահներ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ Վրաստանի վարչապետ Նիկա Գիլաուրիի ղեկավարությամբ:

2011թ. ապրիլի 26-ին եւ նոյեմբերի 7-8-ը աշխատանքային այցով Երեւան է այցելել Վրաստանի ԱԳ նախարար Գրիգոլ Վաշաձեն, հունիսի 28-29-ը Թբիլիսի է այցելել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը: Նախարարները քննարկել են Հայաստանի եւ Վրաստանի նախագահների միջեւ ձեռքբերված պայմանավորվածությունների կատարման ընթացքը, վիրահայությանը հուզող խնդիրներ:

2011թ. Հայաստանի Կրթության եւ գիտության նախարարը, Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարը, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարը, Վերահսկիչ պալատի նախագահը, Երեւանի քաղաքապետն այցելել են Թբիլիսի, տեղի են ունեցել Վրաստանի Պաշտպանության նախարարի, Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարի, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի, Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարի այցերը Հայաստան:

Սեպտեմբերին տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի եւ Վրաստանի արտգործնախարարությունների միջեւ:

ԻՐԱՆ

2011թ. ընթացքում Հայաստան- Իրան փոխշահավետ հարաբերությունները շարունակել են զարգանալ:

Իրանի Իսլամական Հանրապետության Նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հրավերով իրանական ամանորի՝ Նովրուզի տոնակատարություններին մասնակցելու:

նպատակով Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը 2011թ. մարտի 27-ին այցելել է Իրան:

2011 թ. դեկտեմբերի 23 -ին տեղի է ունեցել ԻԻՀ Նախագահ Մահմուդ Ահմադինեժադի այցելությունը Երեւան: Այցի ընթացքում Իրանի Նախագահը հանդիպել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Սամվել Նիկոյանի եւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ: Այցի արդյունքներով ստորագրվել է վեց փաստաթուղթ:

Սեպտեմբերի 16-17-ը տեղի է ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական այցելությունը Թեհրան, որի ընթացքում նախարարը հանդիպել է ԻԻՀ Նախագահ Մահմուդ Ահմադինեժադի եւ Արտաքին գործերի նախարար Ալի Աքբար Սալեհիի հետ:

Նոյեմբերի 7-8-ը պաշտոնական այցով Երեւան է ժամանել Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարար Ալի Աքբար Սալեհին, որը հանդիպումներ է ունեցել Հանրապետության Նախագահի եւ ԱԳ նախարարի հետ:

2011թ. մայիսի 29-30-ը Թեհրանում տեղի է ունեցել հայ - իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 10-րդ նիստը, որին ՀՀ պատվիրակությունը գլխավորել է Էներգետիկայի նախարար, միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Արմեն Մովսիսյանը:

2011 թ. հունիսի 24 -25-ը տեղի է ունեցել ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի այցը Թեհրան:

ԹՈՒՐՔԻԱ

Վերահաստատվել է միջազգային հանրության աջակցությունը հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորման գործընթացում Հայաստանի սկզբունքային դիրքորոշմանը:

Թուրքիան ամեն կերպ խոչընդոտել է 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված արձանագրությունների վավերացմանը:

Թուրքիայի ապակառուցողական մոտեցումները համապատասխան վերաբերմունքի են արժանացել միջազգային հանրության կողմից, որը բազմիցս նշել է. ժամանակն է, որ թուրքական կողմը գործնական քայլ կատարի առանց

նախապայմանների արձանագրությունների վավերացման եւ իրականացման ուղղությամբ:

Հոկտեմբերի 23-ին Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժից տուժածներին Հայաստանը տրամադրել է 40 տոննա մարդասիրական օգնություն:

ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԵՎՐԱԶԵՍ

2011թ. ընթացքում ՀՀ ղեկավարության մասնակցությամբ կայացել են ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստը (սեպտեմբերի 3-ին Դուշանբեում) եւ ԱՊՀ 20-ամյակին նվիրված ԱՊՀ պետությունների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթաժողովը (դեկտեմբերի 20-ին Մոսկվայում), ինչպես նաեւ ԱՊՀ Կառավարությունների ղեկավարների խորհրդի 2 նիստ (մայիսի 19-ին Մինսկում եւ հոկտեմբերի 18-ին Սանկտ-Պետերբուրգում), ԱՊՀ արտաքին գործերի նախարարների խորհրդի 2 նիստ (ապրիլի 8-ին Կիեւում եւ սեպտեմբերի 2-ին Դուշանբեում):

Տարվա ընթացքում նախապատրաստվել եւ ստորագրվել են տնտեսական, հումանիտար, սոցիալական, քաղաքական եւ այլ ոլորտների վերաբերյալ 169 փաստաթղթեր, ինչպես նաեւ համապատասխան ծրագրեր՝ միտված նշյալ ոլորտների շրջանակներում ընդունված որոշումների իրականացմանը:

Հայաստանը միացավ 2011թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված Ազատ առեւտրի գոտու մասին պայմանագրին:

2011թ. ընթացքում Հայաստանում անցկացվեցին ԱՊՀ ճյուղային մարմինների նիստեր, մասնավորապես՝ ԱՊՀ միջտարածաշրջանային եւ մերձսահմանային համագործակցության հարցերով խորհրդի, Կապի հարցերով տարածաշրջանային համագործակցության խորհրդի նիստերը, Ներքին գործերի նախարարների խորհրդի, ԱՊՀ մասնակից պետությունների սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի, ԱՊՀ միջկրոնական խորհրդի նախագահության նիստերը:

2011թ. դեկտեմբերի 19-ին Մոսկվայում Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի նիստին:

2011թ. մարտի 15-ին Մինսկում կայացած վարչապետների մակարդակով ԵվրԱզԷՍ-ի անդամ պետությունների Միջպետական խորհրդի նիստին եւ հոկտեմբերի 19-ին Սանկտ-Պետերբուրգում ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի 31-րդ նիստին մասնակցել է վարչապետ Տիգրան Սարգսյանը:

ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ

Տարին նշանավորվեց հայ-ուկրաինական հագեցած հարաբերություններով:

2011թ. հուլիսի 1-2-ը կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Ուկրաինա, որի արդյունքում ստորագրվել է հինգ փաստաթուղթ: Պաշտոնական այցի շրջանակներում կայացել է Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի հինգերորդ նիստը, ինչպես նաեւ հայ-ուկրաինական գործարար համաժողովը, Ուկրաինայում Հայաստանի մշակույթի օրերի բացումը:

2011թ. հուլիսի 11-12-ը կայացել է Ուկրաինայի Գերագույն Ռադայի նախագահ Վլադիմիր Լիտվինի պաշտոնական այցը Հայաստան, փետրվարի 11-ին՝ Ուկրաինայի ԱԳ նախարար Կոնստանտին Գրիշչենկոյի այցը: Երկու երկրների արտգործնախարարները մի շարք հանդիպումներ են ունեցել միջազգային համաժողովների շրջանակներում:

Ընթացիկ տարում քայլեր են ձեռնարկվել հայ-բելառուսական հարաբերությունների հետագա խորացման ուղղությամբ:

2011թ. մայիսի 18-19-ը կայացել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի պաշտոնական այցը Բելառուս, որի արդյունքում ստորագրվել է երեք համաձայնագիր:

2011թ. մայիսի 16-18-ը Մինսկում կայացել է ՀՀ ԱԺ եւ ԲՀ ԱԺ միջեւ համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի 5-րդ նիստը:

2011թ. սեպտեմբերի 12-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական այցը Բելառուսի Հանրապետություն: Այցի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ է ունեցել Բելառուսի Հանրապետության նախագահ Ա. Լուկաշենկոյի եւ ԱԳ նախարար Ս. Մարտինովի

հետ, որոնց ընթացքում ստորագրվել է արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև 2011-2012թթ. խորհրդակցությունների ծրագիրը:

2011թ. Հայաստանի եւ Ղազախստանի միջև փոխգործակցությունը հիմնականում ընթացել է ԱՊՀ, ՀԱՊԿ, ԵԱՀԿ, ԵՏԸ եւ այլ միջազգային կառույցների շրջանակներում:

Հաշվետու տարվա ընթացքում Ղրղզստանի եւ Տաջիկստանի հետ քաղաքական շփումների բնականոն ընթացքի ապահովմանը նպաստել են երկու երկրների նախագահների եւ ԱԳ նախարարների պարբերական հանդիպումները տարբեր միջազգային ֆորումների շրջանակներում:

2011թ. հունիսի 8-9-ը կայացել է ՀՀ եւ Թուրքմենստանի Միջկառավարական տնտեսական հանձնաժողովի 3-րդ նիստը, որի ընթացքում հստակեցվել են երկկողմ տնտեսական համագործակցության հիմնական ուղղությունները:

ԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

2011թ. փետրվարին Հայաստան է այցելել ՉԺՀ ԱԳ նախարար Յան Ձեչին: Հանդիպումներ են տեղի ունեցել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

2011թ. ապրիլին կայացել է ՉԺՀ Կոմկուսի Կենտրոնական Կոմիտեի Քաղբյուրոյի մշտական անդամ Լի Չանչունի այցը ՀՀ:

2011թ. հուլիսին Պեկինում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ ՀՀ եւ ՉԺՀ արտգործնախարարությունների միջև:

Տարվա ընթացքում կայացել են ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի, Տարածքային կառավարման նախարարի, գլխավոր դատախազի, Վճռաբեկ դատարանի նախագահի եւ Երեւանի քաղաքապետի այցերը ՉԺՀ:

2011 թ. Չինաստանը Հայաստանին աջակցության շրջանակներում տրամադրել է 88 շտապօգնության մեքենա, 249 ավտոբուս:

Հաշվետու տարվա ապրիլին Երեւանում կայացել է Հայ-չինական առևտրատնտեսական միջկառավարական հանձնաժողովի 6-րդ նիստը, որին զուգահեռ անցկացվել է Հայ-չինական գործարար համաժողով:

Նոյեմբերի 7-ին Երեւանում ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ Հնդկաստանի Կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների պետնախարար Սաշին Պայլոտի ներկայությամբ բացվել է Հայ-հնդկական տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնը:

2011թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 1-ը Երեւանում ընթացել է Հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի 5-րդ նիստը: Ստորագրվել է «ՀՀ կառավարության եւ Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջեւ գիտության եւ տեխնոլոգիաների բնագավառներում 2012-2015թթ. համագործակցության մասին» ծրագիրը: Նույն օրերին Երեւանում տեղի ունեցած հայ-հնդկական Գործարար համաժողովի ընթացքում ստորագրվել է համաձայնագիր «Հայ-հնդկական Գործարար խորհրդի ստեղծման մասին»:

Նոյեմբերի 1-ին Երեւանում տեղի ունեցան քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի եւ Հնդկաստանի ԱԳՆ-ների միջեւ:

Հաշվետու տարվա մայիսի 4-5-ը պաշտոնական այցով Հայաստանում է գտնվել Ճապոնիայի ԱԳ առաջին փոխնախարար Հիսասի Տոկունագան, որին ընդունել են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը եւ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը: Այցի շրջանակներում Սբ Գր. Լուսավորիչ տաճարում կայացել է Ճապոնիայի երկրաշարժի եւ ցունամիի զոհերի հիշատակին նվիրված հոգեհանգստի արարողություն, որին մասնակցել է Հիսասի Տոկունագան:

Հայաստանի կառավարությունը երկրաշարժի եւ ցունամիի հետեւանքները վերացնելու նպատակով 500 հազար դոլարի օգնություն է տրամադրել Ճապոնիային:

Ապրիլի 14-ին Բեռլինում եւ դեկտեմբերի 6-ին Վիլնյուսում տեղի են ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումներն Ավստրալիայի ԱԳ նախարար Քեվին Ռադի հետ:

ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Թեեւ արաբական մի շարք երկրներում տեղի ունեցող իրադարձություններին, տարվա ընթացքում քայլեր են ձեռնարկվել բնականոն հարաբերությունների պահպանման ուղղությամբ:

Հայաստանը ջանքեր է գործադրել ճգնաժամային իրավիճակներում հայտնված իր քաղաքացիների անվտանգությունն ապահովելու եւ նրանց Հայաստան տեղափոխելու համար:

Չնայած 2011թ. Եգիպտոսում տեղի ունեցած իշխանափոխությանը՝ տարվա ընթացքում շարունակվել է համագործակցությունը ավանդական բարեկամական այդ երկրի հետ, նոյեմբերի 4-11-ը Հայաստանում կայացել են Եգիպտոսի մշակույթի օրերը, ստորագրվել է երկրների միջև 2012-2014 թթ. մշակութային համագործակցության ծրագիր:

Դեկտեմբերի 8-10-ը տեղի է ունեցել Լիբանանի Նախագահ Միշել Սլեյմանի պաշտոնական այցը Հայաստան: Այցի ընթացքում ստորագրվել է տարբեր ոլորտներում համագործակցության վերաբերյալ 7 փաստաթուղթ:

2011թ. հոկտեմբերի 3-6-ը տեղի է ունեցել Լիբանանի ԱԺ նախագահ Նաբիի Բըրրիի այցը Հայաստան: Նաբիի Բըրրին հանդիպումներ է ունեցել ՀՀ Նախագահի, ԱԺ նախագահի եւ վարչապետի հետ:

Մարտի 21-24-ին տեղի է ունեցել Սիրիայի Արաբական Հանրապետության Ժողովրդական ժողովի նախագահ Մահմուդ Աբրաշի պաշտոնական այցը Հայաստան:

2011թ. հոկտեմբերի 3-7-ը տեղի է ունեցել Քուվեյթի Ֆինանսների նախարար շեյխ Մուստաֆա Ջասեմ ալ-Շամալիի այցը ՀՀ՝ որպես ՀՀ - Քուվեյթ միջկառավարական հանձնաժողովի քուվեյթյան կողմի համանախագահ: Հոկտեմբերի 5-6-ը կայացել է հանձնաժողովի առաջին նիստը Երեւանում, ստորագրվել է երկու փաստաթուղթ:

Ի կատարումն Հայաստանի եւ Քուվեյթի ղեկավարների պայմանավորվածության՝ 2011 թ. Քուվեյթը դիվանագիտական ներկայացուցչություն է հիմնել Երեւանում:

Մայիսի 8-13-ը ՀՀ պատվիրակությունը փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի գլխավորությամբ մասնակցել է Դուբայում կայացած ներդրումային համաժողովին:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

2011թ. մայիսի 6-10-ը Բրազիլիա, Արգենտինա, Չիլի, Ուրուգվայ, Վենեսուելա է այցելել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն լատինաամերիկյան մի քանի երկրների հայաշատ համայնքներ այցելության շրջանակներում: Այցի ընթացքում տեղի է ունեցել հանդիպում Բրազիլիայի փոխնախագահ Միշել Տեմերի հետ:

2011թ. հունվարի 1-ին ՀՀ պատվիրակությունը ԱԳ նախարարի գլխավորությամբ Բրազիլիայում մասնակցել է երկրի նորընտիր Նախագահ Դիլմա Ռուսեֆի երդմնակալության արարողությանը, իսկ հունվարի 2-ին՝ Բրազիլիայի նորանշանակ ԱԳ նախարար Անտոնիո դե Ազիար Պատրիոտայի պաշտոնի ստանձնման արարողությունը, որին հետելել է նախարարներ Նալբանդյանի եւ Պատրիոտայի հանդիպումը:

2011թ. հունվարի 4-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի գլխավորած պատվիրակության այցը Արգենտինա, որի ընթացքում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է անցկացրել իր արգենտինացի գործընկեր Հեկտոր Մարկոս Թիմերմանի հետ:

Սեպտեմբերի 16-ին Երեւանում տեղի են ունեցել խորհրդակցություններ ՀՀ եւ Արգենտինյան Հանրապետության արտաքին գործերի նախարարությունների միջեւ: Ստորագրվել են «Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Արգենտինյան Հանրապետության Կառավարության միջեւ Սովորական անձնագրերի դեպքում մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին համաձայնագիրը», «ՀՀ ԱԳՆ Դիվանագիտական դպրոցի եւ ԱՀ Արտաքին գործերի, միջազգային առևտրի եւ պաշտամունքի նախարարության Ազգային արտաքին ծառայության ինստիտուտի միջեւ փոխգործակցության Համաձայնագիրը» եւ «2011-2015թթ. Հայաստանի Հանրապետության եւ Արգենտինյան Հանրապետության միջեւ մշակութային համագործակցության մասին ծրագիրը»:

Մայիսի 4-ին Չիլիի Հանրապետության Խորհրդարանի արտաքին հարաբերությունների, միջխորհրդարանական կապերի եւ լատինաամերիկյան ինտեգրացիայի հարցերի հանձնաժողովի որոշմամբ ստեղծվել է Չիլի-Հայաստան միջխորհրդարանական խումբ:

Սեպտեմբերի 6-ին Արգենտինայի Սենատում եւ Պատգամավորների պալատում ստեղծվել են ՀՀ-ԱՀ բարեկամության խորհրդարանական խմբեր:

Դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել Հայաստանի Հանրապետության եւ Հոնդուրասի Հանրապետության միջեւ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2011թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 66-րդ նստաշրջանի ընդհանուր քննարկումներին: Այցի շրջանակներում Նախագահը հանդիպումներ է ունեցել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի եւ Գլխավոր ասամբլեայի նախագահի հետ:

ՀՀ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿ-Ի ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ

Հաշվետու տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունը շարունակել է աշխատանքները ՄԱԿ-ի տարբեր հանձնաժողովների եւ կոմիտեների գործադիր մարմիններ ընտրվելու ուղղությամբ: 2011թ.-ին ՀՀ-ն շարունակել է իր գործունեությունն արդեն ընտրված մարմիններում՝ Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովում, որտեղ 2010-2011թ-ին Հայաստանը նախագահել է, Միջազգային առետրի իրավունքի հանձնաժողովում (UNCITRAL), Սոցիալական զարգացման հանձնաժողովում (2008-2012թթ.), Ծրագրման եւ համակարգման կոմիտեում (2009-2011թթ.), Վիճակագրության հանձնաժողովում (2009-2012թթ.), ՄԱԿ-ի բնակավայրերի ծրագրի ղեկավար խորհրդում (UN-Habitat) (2009-2012թթ.), Կայուն զարգացման հանձնաժողովում (2012-2014թթ.), Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեում (2011-2015թթ.):

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային բազմազանության պահպանման եւ խթանման կոմիտեում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության միջազգային բյուրոյում:

Հայաստանը ստանձնել է ՄԱԿ-ի Կանոնադրության հատուկ կոմիտեի նախագահությունը 2012թ. ընթացքում:

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մարտի 3-ին ԵԱՀԿ կենտրոնակայան է այցելել եւ մշտական խորհրդին ելույթով հանդես է եկել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

2011թ. մարտի 17-ից 19-ը տարածաշրջանային այցով Հայաստանում էր գտնվում Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության գործող նախագահ, Լիտվայի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Աուդրոնիուս Աժուբալիսի գլխավորած պատվիրակությունը: Այցի շրջանակներում կայացել են հանդիպումներ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Հաշվետու տարվա մայիսի 10-ին տեղի է ունեցել ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Պետրոս Էֆտիմիովի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան: Կայացել են հանդիպումներ ՀՀ Նախագահի եւ ՀՀ ԱԺ նախագահի հետ: Արտգործնախարար Նալբանդյանի հետ հանդիպման ընթացքում երկուստեք կարեւորվել է դարաբաղյան հակամարտության գոտում վստահության մթնոլորտի ձեւավորման անհրաժեշտությունը՝ հրադադարի ամրապնդման, դիպուկահարների դուրսբերման միջոցով, ինչպես նաեւ հիմնախնդրի խաղաղ բանակցային կարգավորմանն այլընտրանք չլինելու հրամայականը:

2011թ. նոյեմբերի 26-ին Վիլնյուսում տեղի է ունեցել Հայաստանի եւ Լիտվայի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի եւ Աուդրոնիուս Աժուբալիսի հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են նաեւ ԵԱՀԿ լիտվական նախագահության շրջանակներում նախարարական խորհրդի հանդիպմանն առնչվող հարցեր: Աուդրոնիուս Աժուբալիսը բարձր է գնահատել Հայաստանի ներդրումը ԵԱՀԿ աշխատանքներում:

Հուլիսի 15-ին Վիեննայում եւ դեկտեմբերի 6-ին Վիլնյուսում տեղի է ունեցել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Լամբերտո Ջանյերի հանդիպումները:

Դեկտեմբերի 6-7-ը Վիլնյուսում կայացել է Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության արտգործնախարարների խորհրդի 18-րդ նստաշրջանը, որին մասնակցել է Հայաստանի պատվիրակությունը՝ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորությամբ: Հայաստանի պատվիրակությունն ակտիվ

մասնակցություն է ունեցել խորհրդի օրակարգում ներառված ձգձգվող հակամարտությունների, ժամանակակից մարտահրավերների, մամուլի ազատության եւ եվրոպական անվտանգության ամրապնդմանը վերաբերվող հարցերի քննարկմանը:

Նստաշրջանի առաջին օրն ընդունվել է Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարների եւ Հայաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարների համատեղ հայտարարություն:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

2011թ., ինչպես նախորդ տարիների ընթացքում, Հայաստանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Եվրոպայի խորհրդի աշխատանքներին:

Հայաստանը շարունակել է իր ակտիվ ներգրավվածությունը կազմակերպության համար կենսական նշանակություն ունեցող բարեփոխումների գործընթացում, որոնք մասնավորապես վերաբերվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ Նախարարների կոմիտեի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

2011թ. հունիսի 22-ին կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը ԵԽ, որի ընթացքում Նախագահը հանդիպումներ է ունեցել ԵԽ ղեկավարության հետ, ինչպես նաեւ հանդես եկել ելույթով ԵԽԽՎ նստաշրջանին:

Առաջընթաց է արձանագրվել ԵԽ առջեւ անդամակցությունից եւ ԵԽ կոնվենցիաներից բխող Հայաստանի պարտավորությունների կատարման գործընթացում:

Աշխատանքային այցերով ԵԽ-ում են գտնվել ՀՀ փոխվարչապետ - տարածքային կառավարման նախարարը, կրթության եւ գիտության նախարարը, արդարադատության նախարարը:

2011թ. ընթացքում Հայաստան են այցելել ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարը եւ ԵԽԽՎ Հայաստանի հարցերով համազեկուցողները:

Շարունակվել է ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության ակտիվ մասնակցությունը կառույցի աշխատանքներին:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 25-26-ը Երեւանում տեղի է ունեցել Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի 31-րդ գլխավոր վեհաժողովը, որին մասնակցել է ավելի քան 350 պատվիրակ 50 երկրների 200 քաղաքներից:

2011թ. դեկտեմբերի 1-2-ն արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Փարիզում մասնակցել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախարարական համաժողովին: Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը հանդիպում է ունեցել ՖՄԿ գլխավոր քարտուղար Աբդու Դիուֆի, Կազմակերպությունում նախագահող Շվեյցարիայի նախագահի հետ:

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԿ

Հայաստանը ոչ միայն ակտիվորեն ներգրավված է եղել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում ընթացող գործընթացներում, այլև հանդես է եկել կազմակերպության ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններով:

«Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է օգոստոսի 12-ին Աստանայում կայացած ՀԱՊԿ անդամ պետությունների ոչ պաշտոնական գագաթաժողովին, ինչպես նաև դեկտեմբերի 20-ին Մոսկվայում տեղի ունեցած Հավաքական անվտանգության խորհրդի նիստին:

«Կողմից վավերացվել են ՀԱՊԿ շրջանակներում 2010 թ. կնքված 10 համաձայնագրերն ու պայմանագրերը:

2011թ. ընթացքում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցել է ՀԱՊԿ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների երկու պաշտոնական հանդիպումներին՝ մայիսին Մինսկում ու դեկտեմբերին՝ Մոսկվայում եւ ոչ պաշտոնական հանդիպմանը՝ Վիլնյուսում:

Մայիսի 19-20-ը Երեւանում կազմակերպվել է «ՀԱՊԿ-ն ու Հարավային Կովկասը. Տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության հեռանկարները» միջազգային համաժողովը, իսկ հուլիսի 6-7-ը անցկացվել է ՀԱՊԿ անդամ

պետությունների թմրանյութերի ապօրինի շրջանառության դիմակայման իրավասու մարմինների համակարգող խորհրդի ղեկավարների 10-րդ հոբեյանական նիստը:

Հաշվետու տարվա ընթացքում ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոյուժան երկու անգամ՝ հուլիսին եւ դեկտեմբերին, այցելել է Հայաստան, հանդիպումներ ունեցել երկրի բարձրաստիճան ղեկավարների հետ:

ՆԱՏՕ

Հաշվետու տարվա ընթացքում իրականացված աշխատանքները նպատակաուղղված են եղել նոյեմբերի 4-ին հաստատված Հայաստան-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների 2011-2013թթ ծրագրի (ԱԳԳԾ) մշակմանը:

Հուլիսի 27-ին ՆԱՏՕ-ի կենտրոնակայան է այցելել ՀՀ արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարների գլխավորած պատվիրակությունը՝ մասնակցելու Հյուսիսատլանտյան խորհուրդ + Հայաստան նիստին:

Հունիսի 28-29-ը Հայաստան է այցելել Կովկասում եւ Միջին Ասիայում ՆԱՏՕ-ի ԳՔ Հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապատուրայը:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2011թ. ընթացքում ՀՀ ԱԳՆ-ը շարունակել է բարձրացնել Ադրբեջանի կողմից ԵՍԶՈւ պայմանագրով սահմանափակվող սովորական սպառազինությունների առաստաղների շարունակական գերազանցման խնդիրը տարբեր միջազգային ասյաններում, մասնավորապես ԵԱՀԿ ԱՀՖ, Համատեղ խորհրդատվական խմբի նիստերի եւ ՄԱԿ-ի Առաջին կոմիտեի հանդիպումների շրջանակներում: Նշված խնդրին անդրադարձ է կատարել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը 2011թ. դեկտեմբերի 6-7-ը Վիլնյուսում կայացած ԵԱՀԿ նախարարների խորհրդի նիստի ընթացքում իր ունեցած ելույթում:

Հայաստանի Հանրապետությունը շարունակել է հետետոլական կերպով իրականացնել 1990թ. ԵՍԶՈւ պայմանագրի, 1999թ. Վիեննայի փաստաթղթի (ՎՓ 99) եւ ԵԱՀԿ վստահության ու անվտանգության միջոցառումների տարբեր ձեւաչափերի շրջանակներում ստանձնած միջազգային պարտավորությունները:

ԽԱՂԱՂԱՊԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2011թ. հունիսի 21-ին 81 հոգանոց ՀՀ խաղաղապահ զորախումբը տեղակայվել է Մազարի Շարիֆում: Հայաստանը Աֆղանստան է ուղարկել նաև 5 տեսուչ. այդպիսով ՀՀ խաղաղապահների թիվը Աֆղանստանում հասցվել է 126-ի:

2011թ. ապրիլի 14-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Բեռլինում կայացած Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժերին (ISAF) ներդրում կատարող երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպմանը:

Հաշվետու տարվա դեկտեմբերի 5-ին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Բոննում մասնակցել է Աֆղանստանին նվիրված միջազգային համաժողովին, որի ժամանակ հանդես է եկել ելույթով:

ԳԼՈՐԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԿ ԽՆԴԻՐՆԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում հայկական պատվիրակությունների կազմում ԱԳՆ ներկայացուցիչները մասնակցել են Վիեննայում եւ Սեուլում կայացած Միջուկային անվտանգության գագաթաժողովի մասնակից պետությունների ղեկավարների Զանգվածային ոչնչացման զենքերի հարցերով հատուկ ներկայացուցիչների տեղակալների հանդիպումներին, Սինգապուրում կայացած արտահանման վերահսկման միջազգային համաժողովին, Հաագայում կայացած Քիմիական զենքի կոնվենցիայի մասնակից երկրների համաժողովի 16-րդ նստաշրջանին:

2011թ. հունիսի 20-ից 24-ը ՀՀ պատվիրակությունը մասնակցել է Վիեննայում տեղի ունեցած Միջուկային անվտանգության հարցերով ԱԷՄԳ նախարարական համաժողովին:

Սեպտեմբերի 19-ից 23-ը ՀՀ պատվիրակությունը մասնակցել է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) 55-րդ գլխավոր համաժողովին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական բաղադրիչը կարևոր տեղ է զբաղեցրել արտաքին քաղաքական օրակարգում: Զարգացել են տնտեսական հարաբերությունները ինչպես երկկողմ,

այնպես էլ՝ միջազգային կառույցների եւ ֆինանսական ինստիտուտների հետ: ԱԳՆ անմիջական մասնակցությամբ եւ համակարգմամբ տեղի են ունեցել տասնյակ միջկառավարական հանձնաժողովների նիստեր եւ գործարար համաժողովներ:

2011թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունն ակտիվորեն մասնակցել է Սեւծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) շրջանակներում իրականացվող գործունեությանը:

Հաշվետու տարվա հունիսի 8-ին Բուխարեստում կայացել է ՍԾՏՀ ԱԳ նախարարների խորհրդի 24-րդ հանդիպումը, որին մասնակցում էր Հայաստանի պատվիրակությունը ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Սերգեյ Մանասարյանի գլխավորությամբ:

2011թ. առաջին կեսին ՍԾՏՀ գյուղատնտեսության եւ գյուղարդյունաբերության աշխատանքային խմբի համակարգող երկիրն էր Հայաստանը: Այնուհետեւ Հայաստանն ստանձնել է նաեւ Տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների եւ Առողջապահության ու դեղագործության աշխատանքային խմբերի համակարգումը:

Դեկտեմբերի 14-16-ը Մոսկվայում տեղի է ունեցել ՍԾՏՀ անդամ-երկրների Արտաքին գործերի նախարարների խորհրդի 25-րդ հանդիպումը: Նախարարական նիստին ելույթ է ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Հաշվետու տարվա նոյեմբեր ամսին ՀՀ պատվիրակությունը մասնակցել է Բուխարեստում կայացած ՏՐԱՍԵԿԱ-ի Մշտական քարտուղարության եւ ՏՐԱՍԵԿԱ 9-րդ ամենամյա միջկառավարական հանձնաժողովի նիստերին:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ

Ի կատարումն Ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի ստեղծման մասին ՀՀ Նախագահի հրամանագրի՝ համապատասխան աշխատանքներ են նախաձեռնվել ԱԳՆ եւ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից:

Հայոց Ցեղասպանության 96-րդ տարելիցի կապակցությամբ շուրջ հինգ տասնյակ երկրներում անց են կացվել ոգեկոչման եւ հիշատակի հարյուրավոր

միջոցառումներ, որոնց իրենց աջակցությունն են ցուցաբերել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները:

2011թ. դեկտեմբերի 22-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից ընդունվել է ցեղասպանությունների ժխտումը քրեորեն պատժելու մասին օրինագիծը, որը լուրջ քայլ էր ժխտողականության դեմ պայքարի, ցեղասպանությունների կանխարգելման տեսանկյունից:

ՍՓՅՈՒՌՔ

2011թ. ընթացքում ՀՀ արտգործնախարարությունը շարունակական աջակցություն է ցուցաբերել ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությունների եւ ծրագրերի իրականացմանը, համաժողովների ու միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը:

2011թ. սեպտեմբերի 18-19-ը իր աջակցությունն ու մասնակցությունն է ցուցաբերել Սփյուռքի կազմակերպությունների ներկայացուցիչների եւ համայնքների ղեկավարների համահայկական համաժողովի կազմակերպմանը: Համաժողովին ՀՀ ԱԳ նախարարը հանդես է եկել արցախյան հիմնախնդրի կարգավորմանը նվիրված ելույթով:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտգործնախարարությունն իր համակողմանի աջակցությունն է ցուցաբերել մշակութային համագործակցության զարգացմանը եւ ընդլայնմանը: ԱԳՆ-ն իր նպաստն է բերել Հայաստանում Բելառուսի, Մեքսիկայի, Եգիպտոսի մշակույթի օրերի, իսկ Քուվեյթում, Ուկրաինայում ու Չինաստանում հայկական մշակույթի օրերի անցկացմանը:

ՀՀ ներկայացուցչությունների հետ համագործակցաբար մշակութային բազմաթիվ միջոցառումներ են իրականացվել աշխարհի տարբեր երկրներում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Իտալիայում, Գերմանիայում, Հունաստանում, Լեհաստանում, Բրազիլիայում, Արգենտինայում, Բելգիայում, Նիդերլանդներում եւ այլուր:

ԱԳՆ աջակցել է Մշակույթի նախարարությանը 2011թ. դեկտեմբերի 14-ին Վենետիկի Կոռեր հնագիտական ազգային թանգարանում եւ Մարչանա ազգային գրադարանում հայ գրատպության 500-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների անցկացմանը, «Հայաստան. քաղաքակրթության դրոշմներ» խորագրով ցուցահանդեսի կազմակերպմանը:

Հաշվետու տարում Հայաստանը ստանձնել է ԱՊՀ մասնակից պետությունների մշակութային համագործակցության խորհրդի նախագահությունը:

ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ

2011թ. ընթացքում ստորագրվել է 80 միջազգային պայմանագիր եւ 36 միջազգային պայմանագիր չհանդիսացող այլ միջազգային փաստաթուղթ, վավերացվել է 82 եւ ուժի մեջ է մտել 68 միջազգային եւ միջպետական փաստաթուղթ:

ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ մշակվել եւ ընդունվել են շուրջ 40 իրավական ակտերի նախագծեր:

ԱԳՆ-ում շրջանառվել է շուրջ 160000 փաստաթուղթ:

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2011թ. ընթացքում շարունակվել է աշխատանքն օտարերկրյա պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների եւ շահերի պաշտպանության ուղղությամբ:

Հյուպատոսական ծառայության կողմից Հայաստանում եւ արտերկրում սպասարկվել է շուրջ 75000 ՀՀ քաղաքացի:

Հաշվետու տարվա ընթացքում բազմաթիվ իրավական եւ նորմատիվ ակտերի մշակումն ու ընդունումը նպաստել է հյուպատոսական ոլորտի կանոնակարգմանը: Մասնավորապես, փոփոխություններ են կատարվել քաղաքացիություն շնորհելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկում, ինչն ավելի է հեշտացրել ՀՀ քաղաքացիություն ստանալու գործընթացը:

Հյուպատոսական ոլորտում տեղի են ունեցել լայնածավալ բարեփոխումներ՝ միտված ՀՀ քաղաքացիների սպասարկման որակի եւ արդյունավետության բարձրացմանը, թղթաբանության կրճատմանը:

ԱԳՆ նոր կայքում զգալի տեղ է հատկացված մատուցվող հյուպատոսական ծառայությունների ներկայացմանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

Հաշվետու տարում կազմակերպվել են միջազգային առաջատար լրատվամիջոցների նկարահանող խմբերի եւ թղթակիցների այցելություններ Հայաստան եւ Արցախ, աջակցություն է ցուցաբերվել նյութերի պատրաստման, տեսանկարահանման գործում:

ՀՀ արտաքին գործերի նախարարը ելույթներով հանդես է եկել «Բրուքինգս» քաղաքագիտական կենտրոնում, Լոնդոնի Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտում, Դուբլինի Միջազգային եւ եվրոպական գործերի ինստիտուտում, Դանիայի արտաքին քաղաքականության ասոցիացիայում, Վիեննայի Դիվանագիտական Ակադեմիայում, Չեխիայի միջազգային հարաբերությունների ասոցիացիայում:

Հանրապետության Նախագահն ու ԱԳ նախարարը շուրջ վեց տասնյակ հարցազրույցներ եւ ասուլիսներ են տվել աշխարհի առաջատար լրատվամիջոցներին:

Նախարարի տեղակալներն ու ՀՀ դեսպաններն տասնյակ ելույթներ են ունեցել առաջատար հետազոտական կենտրոններում, հարցազրույցներ տվել հեղինակավոր ՋԼՄ-երի:

2011թ. ընթացքում Հայաստանի արտաքին քաղաքականության, տնտեսության, մշակույթի մասին բազմաթիվ հոդվածներ են հրապարակվել եւ տեսանյութեր ցուցադրվել արտասահմանյան առաջատար լրատվամիջոցների կողմից:

Իրականացվել են Արցախի պատմության, մասնավորապես՝ Արցախյան շարժման վերաբերյալ օտարերկրյա լսարանների իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

2011թ. ընթացքում նկարահանվել է «Հայաստանի արտաքին քաղաքականության 20-տարին» վավերագրական ֆիլմը:

2011 թ. մարտից սկսել է գործել ԱԳՆ նոր եռալեզու վեբկայքը, գործում են ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների միասնական ձեռով մշակված կայքերը: